ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ
ST. SIEGE D'ETCHMIADZINE
CATHOLICOSSAT
66 28 Յունուարի 1993

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի Թեմական Խորհրդի հրաւերով 1993 թուականի Յունուարի 20-23 օրերին պաշտօնական այցով Մոսկուայում էր գտնուում Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց թեմի տարածքում, ներառեալ Հիւսիսային Կովկասն ու Միջին Ասիան, այսօր բնակւում են աւելի քան մէկ ու կէս միլիոն հայեր:

Այս առթիւ Նորին Սրբութեանը, որպէս նրա շքախմբի անդամներ, ուղեկցում էին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսեանը, Հայաստանի Հանրապետութեան կրօնական խորհրդի նախագահ պրն. Լիւդվիգ Խաչատուրեանը և Տ. Վազգէն աբեղայ Միրզախանեանը՝ իբրև գաւազանակիր:

Յունուարի 20-ին, չորեքշաբթի օրը ժամը 17-ին Վեհափառ Հայրապետը Ռուսաստանի նախարարների խորհրդի շէնքում պաշտօնական հանդիպում ունեցաւ Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չերնոմիրդինի հետ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 20-ին Հայոց Հայրապետը Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի Թեմական Խորհրդի անդամ և ազգային բարերար պրն. Սերժ Ջիլաւեանի առանձնատանը ջերմ մթնոլորտում տեսակցութիւն ունեցաւ Մոսկուա քաղաքի քաղաքագլուխ պրն. Եուրի Լուժկովի հետ: Տեսակցութեանը ներկայ էր նաև Մոսկուայի նախկին քաղաքագլուխ պրն. Գաւրիլ Պոպովը:

Յունուարի 21-ին, հինգշաբթի օրը առաւօտեան ժամը 11-ին Նորին Սրբութեանը և նրա շքախմբի անդամներին Կրեմլում ընդունեց Ռուսաստանի Փոխ-նախագահ Դմիտրի Ռուցկոյը: Ընդունելութեան ընթացքում շօշափվեցին ներկայումս հայ ժողովրդին յուզող մի շարք կենսական հարցեր, ներառեալ Լեռնային Ղարաբաղի արդար ու խաղաղ լուծման հարցը:

Նոյն օրը ժամը 13-ին, պատասխանելով Ռուս Օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբութիւն Ալեքսի Բ Պատրիարքի եղբայրական հրաւերին, Հայոց Հայրապետը հանդիպում ունեցաւ նրա հետ Մոսկուայի Ս. Դանիլով Պատրիարքանիստ վանքում: Յաւարտ հանդիպման, որը տեղի ունեցաւ եղբայրական սիրալիր մթնոլորտում, երկու եկեղեցիների Հովուապետերը ստորագրեցին համատեղ մի յայտարարութիւն:

Աւելի ուշ, յետմիջօրէի ժամը 16-ին Մոսկուայի „Մետրոպոլ" հիւրանոցի

digitised by A.R.A.R.@

դահլիճում պրն. Սերժ Ջիլաւեանը Նորին Սրբութեան պատուին տուեց ճոխ ճաշկերոյթ, որին ներկա էին Մոսկուայի և Համայն Ռուսիոյ Ալեքսի Բ Պատրիարքը իր շքախմբով, Մոսկուայում հաւատարմագրուած բազմաթիւ երկրների դեսպաններ, դիւանագէտներ, Մոսկուայի հայ համայնքի ներկայացուցիչներ, ռուս մտաւորականներ, արուեստագէտներ՝ ընդամէնը շուրջ 900 հոգի:

Ընդունելութեան ընթացքում ողջոյնի և օրհնութեան խօսքով հանդէս եկան Հայոց Հայրապետը և Ալեքսի Բ Պատրիարքը:

Յունուարի 22-ին, ուրբաթ օրը առաւօտեան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը Մոսկուայի քաղաքագլխի հրաւերով քաղաքապետարանում պաշտօնական հանդիպում ունեցաւ քաղաքագլուխ Եուրի Լուժկովի հետ: Այս առթիւ Վեհափառին ընկերակցում էին նրա շքախմբի անդամները: Զրոյցի ընթացքում, որն անցաւ ջերմ սրտագին մթնոլորտում, քաղաքագլուխը խոստացաւ յատուկ հողամաս տրամադրելու Մոսկուա քաղաքի կենտրոնում հայկական մի եկեղեցի կառուցելու համար:

Նոյն օրը ժամը 13-ին Հայոց Հայրապետը այցելեց Մոսկուայում Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցչութիւն, որտեղ հանդիպում ունեցաւ նորաբաց հայկական գիմնազիայի ուսուցչական կազմի և սաների հետ:

Յունուարի 23-ին, շաբաթ օրը առաւօտեան ժամը 13-ին Վեհափառ Հայրապետը Ալեքսի Բ Պատրիարքի պատուին ճաշկերոյթ տուեց պրն. Սերժ Ջիլաւեանի առանձնատանը: Այս առթիւ նաև տեղի ունեցաւ Նորին Սրբութեան հանդիպումը Օստանկինոյի հեռուստաընկերութեան թղթակիցների հետ:

Նոյն օրը ժամը 14-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Մոսկուայի հայոց Ս. Յարութիւն եկեղեցի ու հանդիպում ունեցաւ Մոսկուայաբնակ հայ հաւատացեալների հետ և իր օրհնութիւնը բաշխեց նրանց:

Ժամը 16-ին Հայոց Հայրապետը Մոսկուայից վերադարձաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

digitised by A.R.A.R.@